



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 13 » հոկտեմբերի 2021 թվականի N 246- ջԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒԹԵՐ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, 36-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում իրականացվող հաշվեքննության առաջադրանքի ղեկավարի ծառայողական գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում իրականացվող հաշվեքննության ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքների վերաբերյալ նյութերը՝ «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման նկատմամբ» հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈՒՅԱՆ